

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳՐԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐ-Ք ԴԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԻ ԳՈՐԾԱՐ- ԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆ-ՔՆԵՐՈՒՄ

Նարինե Միրզոյան

12-13-րդ դարի հայ խոշորագույն մտածող Մխիթար Գոշի «Գիրք դատաստանի» կամ «Դատաստանագիրքը», հայերեն խմբագրություններից բացի, ունեցել է այլալեզու խմբագրություններ և դրանց թարգմանությունները՝ լատիներեն, լեհերեն, ղիչաղերեն, վրացերեն և ռուսերեն: Այն կիրառվել է նաև հայկական մի շարք համայնքներում, որոնցից մեծ մասի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են, իսկ մի մասի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել:

Հայկական գաղթավայրերի առաջացման, համայնքների կազմավորման, ինչպես նաև ներքին կյանքին առնչվող շատ հարցեր մտահոգել են դեռևս միջնադարի հայ պատմիչներին, ովքեր ավանդել են փաստագրական հավաստի տեղեկություններ: Հատկապես պետք է առանձնացնել Ղևոնդի, Սեբեոսի, Ասողիկի, Արիստակես Լաստիվերցու, Մատթեոս Ուռհայեցու, Սամուել Անեցու, Թովմա Արծրունու, Կիրակոս Գանձակեցու, Առաքել Դավրիժեցու, Գրիգոր Դարանաղցու, Սիմեոն Լեհացու և ուրիշների գործերը²: Հայկական համայնքների ուսումնասիրման համար

¹ Սույն ուսումնասիրության մեջ կիրառվել են երկի անվան երկու տարբերակները՝ «Գիրք դատաստանի» և «Դատաստանագիրք»։ «Գիրք դատաստանի» անվանաձևը բնագրային է: «Դատաստանագիրքի» բոլոր դարերի ձեռագրերում երկն անվանված է «Գիր դատաստանի» կամ «Գիրք դատաստանի», ինչպես օրինակ՝ «ի ձեռն գրոց դատաստանի», «զգիրս դրոշմեցաք դատաստանի», «յօժարեցաք գրել զդատաստանաց գիրքըս», «պատճառ գրոցս դատաստանի», «զիրս դատաստանի», «զգիր դատաստանիս», «ի գիրս դատաստանի» և «գրոցս դատաստանի»: Ուստի գրության բնագրային տարբերակը պահպանել ենք միայն վերնագրում և առանձնահատուկ դրվագներում, իսկ ամբողջ շարադրանքում, ելնելով նաև միօրինակության սկզբունքներից, գործածել ենք հայագիտության մեջ առավել տարածված և կիրառելի տարբերակը՝ «Դատաստանագիրք» անվանաձևը:

² Տե՛ս **Ղևոնդ**, Պատմություն, աշխատ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, «Սովետական գրող», 1982, Պատմություն **Սեբեոսի**, աշխատ.՝ Գ. Վ. Աբգարեանի, Երևան, 1979, Պատմություն տիեզերական **Ստեփանոս Տարսնեցույ**, Ս. Պետերբուրգ, 1885, Պատմություն **Արիստակիսի Լաստիվերցույ**, Երևան, 1963, **Մատթեոս Ուռհայեցի**, ժա-

կարևոր աղբյուր են նաև հայերեն ձեռագրերը և հատկապես դրանց հիշատակարանները¹: Հայոց գաղթաշխարհի ուսումնասիրման համար բավականին ուշագրավ են նաև Մինաս Բժշկյանի, Սադոկ Բարոնչի, Ղևոնդ Ալիշանի և ք. Քուշներյանի գործերը²: Նորագույն շրջանում ևս հայկական համայնքներին նվիրված մի շարք ուսումնասիրություններ են կատարվել, նվիրվել են նաև զեկուցումներ³: «Դատաստանագրքի»՝ հայկա-

մանակագրություն, Վաղարշապատ, 1898, **Սամուէլ Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, **Թովմա Արծրունի**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, աշխատ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Պատմութիւն **Առաքել Վարդապետի Դարիժեցոյ**, Վաղարշապատ, 1896, Ժամանակագրութիւն **Գրիգոր վարդապետի Կամախեցոյ** կամ **Դարանաղցոյ**, աշխատ.՝ Մեսրոպ վրդ. Նշանեանի, Ե-ՀԳ, Երուսաղէմ, 1915, **Սիմէոն դպիր Լեհացոյ** Ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, ուսումնասիրեց՝ Ն. Ակինյան, Վիեննա, 1936:

- ¹ **Խաչիկյան Լ.**, ԺԴ դարի հայերեն հիշատակարաններ, Երևան, 1950, Նույնի, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա և Բ, Երևան, 1955, **Հովհաննիսյան Ա.**, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հտ. Ա, Երևան, 1974 և հտ. Բ (1621-1640 թթ.), Երևան, 1981, **Հակոբյան Վ.**, Մանր ժամանակագրություններ. 13-18-րդ դդ., հտ. Ա, Երևան, 1951, հտ. Բ, Երևան, 1956, **Մաթևոսյան Ա.**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Երևան, 1984, Ե-ԺԲ դար, Երևան, 1988:
- ² **Բժշկյան Մինաս**, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1836, **Սադոկ Բարոնչ**, Ակնարկ հայոց պատմության, Տերնուպոլ, 1869, **Ալիշան Ղ.**, Կամենից, Վենետիկ, 1896, Նույնի, Հայ-Վենետ կամ յառնչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Ձ դարս, Ս. Ղազար, 1896, **Քուշներյան ք.**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, Ս. Ղազար, 1895:
- ³ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ալպոյաճյան Ա.**, Պատմություն հայ գաղթականության, հտ. Ա, մ.թ.ա. 6-րդ դ.- մ. թ. 11-րդ դ. մ. թ., Կահիրե, 1941, հտ. Բ, 11-15-րդ դ., Կահիրե, 1955, հտ. Գ, սկսած 16-րդ դ. (անավարտ), Կահիրե, 1960, **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հտ. Ա., Երևան, 1964, հտ. Բ, Երևան, 1967, Исторические связи и дружба украинского и армянского народов. Сборник материалов первой научной сессии, Ер., 1961, Второй сессии, Киев, 1965, Третьей сессии, Ереван, 1971, Հայ ժողովրդի պատմություն, Գիտությունների ազգային ակադեմիա, հտ. IV, Երևան, 1972, էջ 297-432, **Միքայելյան Վ.**, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հտ. Ա, Երևան, 2001, **Գասպարյան Ա.**, Սիյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, Ուսումնասիրությունք լեհահայոց դատաստանագրոյն, թարգմ.՝ Հ. Գ. Վ. Գալէմքեարյան, Վիեննա, 1890, **Ղասարյան Ջ. Մ.**, Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, Երևան, 1986, Պատմութիւն

կան համայնքներում կիրառման ուսումնասիրումն անհրաժեշտ է օրենսգրքի կարևորությունն ու արդիականությունը փաստելու համար:

Լատիներեն խմբագրություն: «Դատաստանագրքի» այլալեզու խմբագրություններից ժամանակով առաջինը լատիներենն է՝ կազմված Լեհաստանում: Այն գործարկվել է Լեհաստանի և Ուկրաինայի հայկական ինքնավար համայնքներում:

15-17-րդ դարերում Լեհաստանի տարածքում մի քանի տասնյակ հազարի հասնող հայեր հիմնականում տեղաբաշխված էին Լվով, Կամենեց-Պոդոլսկ, Լուցկ, Վոլինի Վլադիմիր, Յարոսլավլ, Յազլովեց, Ռաշկով, Ստանիսլավ, Կուտի, Տիսմենիցա, Սենյատին, Լիսեց, Գալիչ, Ջլոչով, նաև բուն լեհական Կրակով, Լյուբլին, Վարշավա, Վրոցլավ և Պոզնան քաղաքներում: Տեղական իշխանությունների և հայ համայնքների իրավադատական վեճերին հակազդելու համար լեհ թագավոր Սիգիզմունդ Մեծի պահանջով Լվովի հայ ավագների խորհուրդը իրենց օրենքները թարգմանեց հայերենից ռուբեններեն կամ լատիներեն և 1519 թ. Սբ. Աստվածածնի Ավետման օրը Կրակովում ներկայացրեց թագավորին: Նույն թվականի Պենտեկոստի շաբաթ օրը թագավորը հաստատեց օրենքները Պյոտրկով քաղաքում հրավիրված սեյմում:

Այսպիսով՝ լեհահայոց իրավունքի հիմքում ընկած է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Լեհահայոց օրենքները տարածվել են Լվովի, նրա արվարձանների ու Գալիցիայի հայաբնակ գյուղերի, ապա Աջափնյա Ուկրաինայի հայկական մյուս համայնքների վրա: Առկա են լատիներեն, լեհերեն ու ղփչաղերեն (իմա՝ թյուրք-թաթարական-Ն. Մ.) թարգմանությունները, որոնցից առաջինը կատարված է բնագրից, լեհերենը՝ լատիներենից, իսկ հայատառ ղփչաղերենը՝ լեհերենից: Հայերեն նախնական խմբագրությունը կիրարկվել է Հարավային և Արևմտյան Ռուսիայի հայկական գաղթավայրերում դեռևս 13-րդ դարում և 14-րդ դարի առաջին կեսին: Լեհահայոց դատաստանագիրքը շրջանառության մեջ է մտել «Լվովյան դատաստանագիրք», իսկ հայ գիտական գրականության մեջ՝ «Լեհահայոց դատաստանագիրք» պայմանական անվամբ: Ավելի ուշ՝ այս օրենսգիրքը լեհահայ համայնքի ինքնավարության վերացման հետ միասին մոռացության տրվեց: Սակայն, որոշ ժամանակ անց, շնորհիվ

հայ գաղթականության եւ շինության եկեղեցւոյ նոցա հանդերձ յաւելուածովք գրեաց Մեսրոպ վարդապետ Ուղուրեան, Վենետիկ, 1891:

Լեմբերգի համալսարանի ուսուցչապետ, գերմանական իրավունքի հայտնի պատմաբան Ֆերդինանդ Բիշոֆի կողմից լեհահայոց դատաստանագրքի հրատարակությանը, հայկական այս օրենսգիրքը կրկին կյանքի կոչվեց: Ֆ. Բիշոֆը հրատարակեց լեհահայոց դատաստանագիրքը՝ լատիներեն բնագրին կցելով փոքրիկ առաջաբան¹: Նա իր հրատարակության համար ունեցել է երկու ձեռագիր. առաջինը պատկանել է Լեմբերգի քաղաքային դիվանին, երկրորդը գտնվում է Լեմբերգի կայսերական-թագավորական համալսարանի գրադարանում:

Վ. Բաստամյանցն առաջինն էր, ով ցույց տվեց, որ Սիգիզմունդ թագավորի կողմից հաստատված և Բիշոֆի հրատարակած լեհահայոց օրենսգիրքը կազմված է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա²: Հետազոտողի համեմատական աղյուսակում անճշտություններ կան, որոնց մեծ մասը հետագայում ուղղել է Ֆրիդրիխ Մյուլլերը³: Վերջինս ևս գտնում է, որ Լեմբերգի իրավունքը «Դատաստանագրքի» վրա է հիմնված: Մյուլլերից բացի՝ նույն աշխատանքը կատարել է Հ. Կարստը⁴, ով ճշտել է երկու դատաստանագրքերի հոդվածների համապատասխանությունը:

Որպես հայ իրավաբանական մտքի յուրահատուկ արտացոլում՝ լեհահայոց դատաստանագիրքը կարևոր դեր է խաղացել լեհահայոց դատավարական ինքնավարության և ազգային ինքնապահպանման գործում:

¹ Ուսումնասիրությունք լեհահայոց դատաստանագրոյն, թարգմ.՝ Հ. Գ. Վ. Գալեմբեարյան, Վիեննա, 1890: Նույնի, Das alte Recht der Armenier in Lemberg, Wien, 1862, Նույնի, Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg, Wien, 1864:

² Վ. Բաստամյանցը հանգամանորեն համեմատել է Լեհահայոց օրենսգրքի հոդվածները Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» իր հրատարակած բնագրի հետ և ցույց տվել, որ դրանք գրեթե բոլորն ուղղակի թարգմանված են օրենսգրքի համապատասխան հոդվածներից, որոնցից մի քանիսը վերցված են գրեթե բառ առ բառ, մեծագույն մասը ենթարկված է քիչ կամ շատ փոփոխությունների, մի քանիսը ավելի համառոտված են, իսկ մի քանիսը՝ ավելի ընդարձակված: Փոփոխությունների մի մասը հավանաբար արել են Լեմբերգի հայերը՝ հարմարեցնելով իրենց կենցաղին, ժամանակին և դրությանը, իսկ մյուս մասը արել է Լեհաստանի տերությունը՝ հարմարեցնելով իր պետական օրենքներին (Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, էջ 31):

³ Փր. Միլլերի քանի մը նոր յօդուածները, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1891 թ., թիվ 1-12, էջ 179-181:

⁴ **Karst Josef**, Grundriß der Geschichte des armenischen Rechtes, I, Sonderabdruck aus der Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX Band, Stuttgart, 1906, seite 38-39.

«Դատաստանագրքի» բոլոր այն իրավանորմերը, որոնք նախատեսում են առանձին պետական հանցագործություններ, այդ թվում՝ դավաճանության, ապստամբության, մեծությանը վիրավորելու և այլ հանցակազմեր, արտահայտված են հայկական համայնքների բոլոր այն դատաստանագրքերում, որոնք ժամանակի ընթացքում կազմվել էին հայերի կողմից և կիրարկվում էին հյուրընկալող երկրների պետական իշխանության համապատասխան օրգանների կամ իշխանավորների սանկցիայով¹:

¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Գրիգորյան Վ.**, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963, Նույնի, *История армянских колоний в Польше (армяне в Подолии)*, Ереван, 1980, **Հովհաննիսյան Մ.**, Ուրվագծեր Լեհաստանի և Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմության, Երևան, 1977: **Գալустյան Ժ.**, *Культурная жизнь армянских колоний средневековой Польши*, Ереван, 1981, **Պիշոֆ Ֆ.**, *Լեհաստանի հին իրաւունքը*, Վիեննա, 1890 թ., **Ալթունեան Ա.**, *Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան*, որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա և ի Լեհաստան, Փոքշան, 1877: **Բժշկյան Մինաս**, *Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց*, Վենետիկ, 1836, **Սաղոկ Բարոնչ**, *Ակնարկ հայոց պատմության*, Տերնոպոլ, 1869, **Ալիշան Ղ.**, *Կամենից, Վենետիկ*, 1896: Նույնի, *Հայ-Վենետ կամ յառնչութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Ձ դարս*, Ս. Ղազար, 1896, «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, Հայկ. հանրագիտարան հրատ., 2003, էջ 278-289, **Առաքելյան Ա.**, *Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն*, հտ. երրորդ, Երևան, 1975, էջ 223-233: **Кульчицкий В.**, *Армянский «Судебник» Гоша и его применение во Львове (Исторические связи и дружба украинского и армянского народов, Сборник материалов второй украинско-армянской научной сессии)*, Киев, 1965, с. 145-150, **Дашкевич Я.**, *Армянские колонии на Украине в источниках и литературе*, Ереван, 1962, Նույնի, *Украино-армянские связи в XVII в.*, Сборник документов, Киев, 1969, **Кривонос Н.**, *Армянская колония во Львове в первой половине XVII в.*, Ереван, 1965, **Хачикян Л.**, *Армянские колонии на Украине в XVI-XVII, Великая Дружба*, Ереван, 1954, **Ալիինեան Ն.**, *Յուցակ հայերէն ձեռագրաց Լուովի համալսարանի մատենադարանի, արքեպիսկոպոսարանին Ստանիսլավի, Վիեննա*, 1961: **Кривонос Н., Грабовецкий В.**, *Армянская колония во Львове в XIV- XVIII веках, «Տեղեկագիր»*, հասարակական գիտությունների, 1958, թիվ 12, էջ 51-62, **Мышко Д. М.**, *О жизни армян в Киеве в XV в. первой половине XV в.*, «Исторические связи и дружба украинского и армянского народов», Киев, 1965, с. 111-115, **К. Badecki**: *Archiwum akt dawnich miasta Lwowa*, т. III. Львов, 1935, с. 151-167: **Пироженко П. X.**, *Материалы ЦГИА УССР во Львове по истории армянских поселений на Украине*, Сб. «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, с. 237-251, *Вірмено-Українські історичні зв'язки: Матеріали міжнародної наукової конференції (Львів, 28-31 травня 2008)*/ред. **Кеворк Бардакчян**, Франк Сисин, Андрій Ясіновський. Львів 2011. 146 с.,

Լեհերեն թարգմանություն: Ինչպես արդեն նշել ենք, Սիգիզմունդ Առաջինի կողմից հաստատված Լեհահայոց դատաստանագրքի լատիներեն խմբագրությունը թարգմանվել է լեհերեն, իսկ լեհերենից՝ հայատառ դիչադերեն: Ըստ Ֆ. Բիշոֆի, Կ. Վույցիցկու, Օ. Բայցերի և այլոց՝ լեհահայոց դատաստանագրքի լատիներեն խմբագրությունը թարգմանվել է լեհերեն 1601 թ.: Ի տարբերություն նրանց՝ Խ. Թորոսյանը եկել է այն եզրակացության, որ լեհահայոց դատաստանագիրքը լատիներենից լեհերեն է թարգմանվել ոչ թե 1601 թ., այլ 1523 թ. կամ 1519-1523 թթ. միջև ընկած ժամանակահատվածում¹: Վ. Գրիգորյանը ևս կարծում է, որ լեհահայոց դատաստանագիրքը լատիներենից լեհերեն է թարգմանվել 1601 թ., այն ժամանակ, երբ լեհահայ համայնքը բարգավաճում էր, և «Դատաստանագիրքն» ամենօրյա օգտագործման ու կիրարկման գիրք էր²: Նա հատուկ քննության է առել Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները և ընթերցողի ուշադրությանն է հանձնել այդ արձանագրություններից 632-ը, նաև թռուցիկ անդրադարձել է Կամենիցի հայ համայնքի պատմությանը: Կամենեց-Պոդոլսկում ևս գործարկվում էր լեհահայոց դատաստանագիրքը: Նշված արձանագրությունները, որոնք սկզբում պահպանվել են այնտեղ, ապա փոխադրվել Կիևի Ս. Վլադիմիրի անվան արխիվ, իսկ ավելի ուշ՝ Ուկրաինայի պատմական արխիվ, ուշագրավ նյութեր են պարունակում Կամենեց-Պոդոլսկի հայերի իրավական, սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության մասին, նպաստում միջնադարում ուկրաինական այդ նշանավոր քաղաքի իրավատնտեսական կյանքի պատկերը պարզելու, հայ-լեհական և հայ-ուկրաինական հարաբերություններն ուսումնասիրելու գործին: Այս արձանագրությունների քննությունը թույլ է տալիս բացահայտելու այդ գաղթաշխարհի ներքին կյանքը, հայերի զբաղմունքը, նրանց տնտեսա-

27 in. (Armenian-Ukrainian Historical Contacts: Papers of the International Conference Held in Lviv, 28-31 May 2008/ed. By Kevork Bardakjian, Frank Sysyn and Andrii Yasinovskiy, Lviv 2011. 146 p., 20 plates).

¹ **Մխիթար Գոշ**, Գիրք դատաստանի, էջ 2Է-2Ը:

² **Գրիգորյան Վ.**, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), Երևան, 1963 թ., էջ 84:

կան, քաղաքական և մշակութային շփումներն ու մերձեցումը լեհերի և ուկրաինացիների հետ¹:

Լվովի և առհասարակ արևմտուկրաինական ու լեհական հայկական համայնքների հետ 14-17-րդ դարերում սերտ կապերի մեջ է եղել դրիմահայությունը: Լեհահայերն էին, որ դրիմահայոց համար 16-րդ դարում թարգմանել տվեցին Գոշի «Դատաստանագիրքը»: Փաստորեն՝ Ղրիմահայերը ևս կենսագործում էին ղփչաղերենի թարգմանված «Դատաստանագիրքը» և օգտվում էին լիակատար ինքնավարությունից մշակութային, տնտեսական, ներքին կյանքի գրեթե բոլոր հարցերում²:

Լեհահայոց դատաստանագրքի լեհերեն թարգմանությունը հրատարակվել է մի քանի անգամ: Առաջինը հրատարակել է Կ. Վույցիցկին³ Վարշավայում 1843 թ., ապա՝ Սադոկ Բարոնչը⁴ դոմինիկյան հայտնի հայ կրոնավորը, 1869 թ. Տարնոպոլում: Այս հրատարակությունները հետո են գիտական հետազոտություն լինելուց: Այնուհետև 1906 թ. քսանհինգ ձեռագրերի հիման վրա լատիներեն և լեհերեն բնագրերը հրատարակել է Օ. Բալցերը Կրակովում:

Ղփչաղերեն թարգմանություն: Լեհահայոց դատաստանագրքի ղփչաղերեն երկու թարգմանություն կա, երկուսն էլ հայատառ ղփչաղերեն: Հայատառ ղփչաղերենով կան նաև Լեհահայոց դատաստանագրքի բազմաթիվ արձանագրություններ և այլ վավերագրեր, որոնք դարձել են աշխարհի ղփչաղագետների հատուկ քննության առարկա: Այս արձանագրությունների և վավերագրերի ուսումնասիրությամբ է զբաղվել Տ. Ի.

¹ Այս մասին տե՛ս նաև **Տաշեան Յ.**, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 943:

² Այս մասին մանրամասն տե՛ս **Միքայելյան Վ.**, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (միջնադար), Երևան, 1964: Նույնի, Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917), Երևան, 1970: Նույնի, На крымской земле. История армянских поселений в Крыму, Ереван, 1978: Նույնի, Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989: Նույնի, Հայ-իտալական առնչություններ: Ջենովական փաստաթղթերը դրիմահայերի մասին, Երևան, 1974, **Քուչներյան Ք.**, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց, Ս. Ղազար, 1895:

³ **K. Wójcicki**, Prawa y artykuły ormian lwowskich, łacin'skiego originalu piluie na polski jzyk przetłumaczone roku 1601, tom I, Warszawa, 1843, էջ 31-137.

⁴ **S. Barącz**, Rys' dziejów ormian'skich, Tarnopol, 1869, էջ 205-261.

Գրունինը¹, ֆրանսիացի Ժան Դընիին, հունգարացի Էդմունդ Շյուցին և ուրիշներ:

Լեհ գիտնական Մարիան Լևիցկին² և Երուսաղեմի համալսարանի աշխատակից Ռեհնաթա Կոհնովան 1957 թ. Վարշավայում Վրոցլավի Օսոլինյան հաստատության Հ^ր 1916 ձեռագրից Օսոլինյան ակադեմիայի գիտական հանդեսում լույս են ընծայել լեհահայոց դատաստանագրքի ղփչաղերեն բնագիրը: Նրանք ղփչաղերեն դատաստանագրքին կցել են ֆրանսերենով ուշագրավ մի ուսումնասիրություն՝ ղփչաղերենի, հայատառ ղփչաղերեն գործերի և լեհահայոց դատաստանագրքի մասին, իսկ վերջում տվել դատաստանագրքի ղփչաղերեն տեքստը՝ լատինական տառադարձությամբ և համեմատության համար վերահրատարակել Հ. Կարստի կողմից գերմաներեն լույս ընծայված «Դատաստանագրքից» տասներեք գլուխներ: Ընդ որում՝ լեհահայոց դատաստանագրքի ղփչաղերեն բնագրից հրատարակվել են միայն առաջին-տասը չհամարակալված գլուխները, իսկ բուն օրենսգիրքը չի հրատարակվել: Սակայն, ինչպես երևում է հրատարակիչների առաջաբանից, նրանք այս երկու բնագիրը մի բնագիր են համարում: Այդ երկու բնագրերի քննությունից պարզ է դառնում, որ «Դատաստանագիրքը» հայերենից թարգմանվել է լատիներեն, լատիներենից՝ լեհերեն, լեհերենից՝ ղփչաղերեն:

Ներքին կյանքին վերաբերող փաստաթղթերի, մասնավորապես նրանց դատաստանագրքի շուրջ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ³ հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն, լեհերեն և եվրոպական այլ-

¹ **Грунин Т. И.**, Документы на половцком языке XVI в. (Судебные акты Каменец-Подольской армянской общины), М., 1967 г.

² **Marian Lewicki**, Renata Kohnowa, La version turque-kiptchak du Code des lois des Arméniens polonaise d, après le ms. № 1916 de la Bibliothèque Ossolineum Rocznik orientalistyczny, tom XXI, Warszawa, 1957, p. 153-300.

³ Տե՛ս նաև **Edward Tryjarski**, Dictionnaire arméno-kyptchak, Zakład orientalistyki polskiej akademii nauk, tome I, fascicule I, Warszawa, 1968, tome I, fascicule 2, Warszawa, 1968, tome I, fascicule 3, Warscawa, 1969, **Гаркавец А.**, Кыпчакское письменное наследие: Каталог и тексты памятников армянским письмом, Армянско-Кыпчакский словарь, Австрийская Национальная Библиотека, г. Вена, Главный архив древних актов, Варшава, Институт истории Польской Академии Наук, Библиотека Национального института им. Оссолинских, Вроцлав, Библиотека Национального Музея, отделение Чарторьских в Кракове, Библиотека Ягеллонского университета, Краков, Частная коллекция З. Абрагамовича, от потомков М. Левицкого, Краков, Главный архив

և այլ լեզուներով: Դա ևս ապացույց է, որ լեհահայոց դատաստանագիրքը իրավունքի պատմության մեջ մեծ արժեք ունի: Հ. Կոհլերն այն համարում է մի անգին հիշատակարան համեմատական իրավագիտության համար¹:

Աստրախանի Դատաստանագիրքը: «Դատաստանագիրքի» ազդեցությունն ակնհայտորեն զգացվում է նաև Աստրախանի հայոց դատաստանագիրքի բազմաթիվ հոդվածներում, թեև վերջինիս հոդվածներից գրեթե ոչ մեկը բառացի չի համընկնում «Դատաստանագիրքի» հետ: Աստրախանի և Նոր Նախիջևանի հայերը ևս վայելում էին տեղական ինքնավարություն և ղեկավարվում հայկական օրենքներով:

Ֆ. Պողոսյանը հրատարակել է Աստրախանի դատաստանագիրքը՝ հաստատելով, որ նրա (որի մի այլ ընդօրինակությունն էլ կիրառվել է Նոր Նախիջևանում) հեղինակների ձեռքի տակ եղել է Գոշի «Դատաստանագիրքը», որից և օգտվել են նրանք²: «Դատաստանագիրքի» կազմման աշխատանքներին ձեռնամուխ են եղել հայկական համայնքի նշանավոր ներկայացուցիչներ Եղիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը և Սարգիս Օհանյանը, որոնք իրենց աշխատանքն ավարտել են 1765 թ.: Աստրախանում Արդությանի անվան հետ էր կապված հայկական հոգևոր դատարանի, հոգևոր վարչության, հատուկ հոգևոր օրենսդրության մշակումը: Մի կողմից «Դատաստանագիրքն» աղբյուր է ծառայել Աստրախանի դատաստանագիրքի համար, մյուս կողմից երկու դատաստանագիրքերի հիմնական աղբյուրներից մեկը հանդիսացել է հայ ժողովրդի սովորութային իրավունքը:

Աստրախանի դատաստանագիրքը գրվել և սկզբում գործարկվել է Աստրախանում, ապա՝ Հարավային Ռուսաստանի հայկական մյուս հա-

древних актов, Варшава, Кыпчакско-польская версия Армянского Судебника Мхитара Гоша и Армяно-Кыпчакский Процессуальный кодекс. Львов, Каменец-Подольский, 1519-1594/ Составители А. Н. Гаркавец, Г. Сапаргаиев, Алматы: Дешт-и-Кыпчак, Баур, 2003, с. 792, **Гаркавец А.**, Транскрипция Кыпчакского текста 1523 года по рукописи 1916/II Национального института имени Оссолинских, Вроцлав, Польша, и его перевод на русский язык.

¹ Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն, թարգմ.՝ Հ. Գ. Վ. Գալէմքեարյան, Վիեննա, 1890, էջ 9:

² Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, աշխատ.՝ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967 թ., էջ ԾԵ:

մայնքներում: Աստրախանյան օրենսգիրքը հայոց մշակույթի կարևոր հուշարձաններից է, հարստացնում է հայ իրավունքի պատմությունը և միաժամանակ հնարավորություն է ընձեռում խոր ու բազմակողմանի ուսումնասիրելու Ռուսաստանի հայկական համայնքների պատմությունը, հայ համայնքի ներքին կյանքը, սոցիալ-տնտեսական դրությունը և դրանցից բխող իրավական փոխհարաբերությունները: Աստրախանի դատաստանագրքով են ղեկավարվել նաև Ղզլարի, Մոզդոկի հայկական դատարանները և Նոր Նախիջևանի հայկական մագիստրատը, ուստի և այն եղել է գործող օրենսգիրք¹: 1763 թ. նոյեմբերի 6-ին Մոզդոկում իրավունք է վերապահվում ունենալու սեփական դատարան: Մինչև 19-րդ դարի 40-ականն թթ. Ղզլարում և Մոզդոկում դատավարությունը կատարվել է հայերենով՝ Աստրախանի հայոց դատաստանագրքի հիման վրա²: Այսպիսով՝ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայկական դատարաններին հատուկ ազգային սովորույթներին և ավանդույթներին խարսխված ու դրանց օգնությամբ դատ ու դատաստանն իրականացնելու հատկանիշներն էին, որոնք բնորոշում էին համայնքների ազգային պատկերը, ընդգծում նրանց ինքնուրույնությունը: Ինչպես արդեն նշել ենք, Նոր Նախիջևանի հայկական մագիստրատը ևս ուներ իր ինքնավարությունը և կառավարվում էր Աստրախանի դատաստանագրքով: 1794 թ. մինչև 19-րդ դարի կեսը Գրիգորիոպոլում (այժմ՝ Բուդդոնովսկ) ևս կիրառվում էր ռուսահայոց համայնքներում արդեն տարածված Աստրախանի դատաստանագիրքը՝ հիմնված սովորութեան իրավունքի վրա³:

¹ **Բարխուդարյան Վ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, Նույնի, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1861-1917 թթ.), Երևան, 1985, Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, աշխատ.՝ Ֆ. Գ. Պողոսյանի, Երևան, 1967 թ., **Юхт А.**, Армянская колония в Астрахани в первой половине XVIII в., канд. диссерт., Ереван, 1959: Նույնի, Աստրախանի հայկական գաղութի բնակչության սոցիալական կազմը 18-րդ դարի առաջին կեսին, ՀՍՍՌ ԳԱ, «Տեղեկագիր», 1957, թիվ 7, **Хачатрян В.**, Армянская колония в Астрахани во второй половине XVIII в., канд. диссерт., Ереван, 1965, **Դիլոյան Վ.**, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966:

² Архив внешней политики России (АВПР), ф. Кизлярские и Моздокские дела, 1762-1772 гг., д. 1., л. 139.

³ Այս մասին տե՛ս **Ананян Ж.**, Армянская колония Григориополь, Ереван, 1969:

Թեև հստակ պահպանված վկայություններ դեռևս հայտնի չեն, այնուամենայնիվ մեզ հասած կցկտուր տեղեկությունները վկայում են, որ «Դատաստանագիրքը» կիրառվել է նաև Ռումինիայի հայկական համայնքում, հատկապես երկրի արևմտյան հատվածում՝ Տրանսիլվանիայում (17-րդ դ.): Այս փաստը հաստատվում է նաև նրանով, որ 15-րդ դարում Լեհաստանից մեծ թվով հայ ընտանիքներ են գաղթել Ռումինիա: Այստեղից էլ պետք է ենթադրել, որ լեհահայոց դատաստանագիրքն անպայմանորեն կիրառվելու էր Ռումինիայում: Հայաշատ կենտրոններն ունեցել են իրենց քաղաքապետարանները, դատարանները, առաջնորդվել հայկական օրենքներով և Գոշի «Դատաստանագիրքով»: Դեռևս 1733 թ. կայսերական հրովարտակով ինքնավարություն է շնորհվել նաև Եղիսաբեթուպոլսին¹: Գոշի «Դատաստանագիրքը» կիրարկվել է նաև Նոր Ջուղայում:

Վրացերեն խմբագրություն: «Դատաստանագիրքն» իր ազդեցությունն է թողել նաև Վրաստանի օրենսդրության վրա և այնտեղ կիրարկվել է որպես ազգային օրենսգիրք: Այսպես՝ ԺԸ դարի սկզբներին (1703-1709 թթ.) վրաց արքայազն Վախթանգ Զ-ն² կազմեց իր հայտնի «Հա-

¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Քոլանջյան Ա.**, Հայերը Տրանսիլվանիայում (10-18-րդ դարեր), Երևան, 1964: Նույնի, Ռումանայութեան Անին՝ Սուչավայի հայ գաղութը, Երևան, 2000, **Գալփագյան Հ.**, Ռումինահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, **Հակոբ Սիրունի**, Հայ եկեղեցին Ռումեն հողի վրա, Էջմիածին, 1966, «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, Հայկ. հանրագիտարան հրատ., 2003, էջ 440-456, **Ալթունյան Ա.**, Տեղեկագրության Հայոց գաղթականության, որք ի Մոլդո-Վալաքիա, Հունգարիա և ի Լեհաստան, Փոքշան, 1877, **Ալիշան Ղ.**, Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, Վենետիկ, 1896, **Տան Դ.**, Արևելեան Հայք ի Պուրովինա, Վիեննա, 1891, **Գովրիկեան Գ. Հ.**, Հայք Յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ, հտ. Ա, Վիեննա, 1893: Նույնի, Դրանսիլուանիոյ Հայոց Մետրոպոլիտը կամ նկարագիր Կերլա հայաքաղաքի ի գիր եւ ի պատկերս, Վիեննա, 1896:

² ԺԷ-ԺԸ դարերում Վրաստանում ծավալվել էր մշակութալուսավորչական աշխույժ գործունեություն, որի հիմնական կրողը «Իմաստուն արանց» խումբն էր՝ նույն Վախթանգի գլխավորությամբ: Նա առաջին տպարանի հիմնադիրն էր և «Վագրենավորի» առաջին հրատարակիչը: Իր օրենսգրքով Վախթանգը ձգտում էր ամրապնդել մայրամուտ ապրող պետականությունը: Նա չսահմանափակվեց իր օրենսգրքով և ժողովածուի մեջ ներառեց նաև նախորդ դարաշրջաններում ստեղծված ու գործող վրաց օրենքները՝ Բեքայի ու Աղբուղայի, Գևորգ Պայծառափայլի և այլն, ինչպես նաև մովսիսական, հունական և հայկական օրենքները:

վաք օրինաց»-ը: Նա իր ժողովածուի բաղկացուցիչ մաս դարձրեց նաև հարևան ու այլ ժողովուրդների օրենքները: Հայկական օրենքները հենց Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն» է: Փաստորեն՝ Վախթանգ Զ-ն վրացերեն է թարգմանել «Դատաստանագիրքը» և որոշ փոփոխություններով հանդերձ ընդգրկել է իր «Հավաք օրինաց»-ում:

«Հավաք օրինաց»-ը հրատարակվել է ռուսերեն թարգմանությամբ, իսկ 135 տարի հետո՝ բնագրի լեզվով: Երբ 1801 թ. Վրաստանը միացավ Ռուսական կայսրությանը, քաղաքացիական գործերով ղեկավարվեց տեղի սովորույթով և Վախթանգի օրենսգրքով: Գործնական այդ պահանջը բավարարելու համար Ռուսական կառավարության առաջարկով Վախթանգի օրենսգիրքը թարգմանվեց ռուսերեն: Կառավարող Սենատը 1828 թ. Պետերբուրգում հրատարակեց «Сборник законов грузинского царя Вахтанга»: Նույն բնագրի երկրորդ և վերջին հրատարակությունը տեղի ունեցավ Թբիլիսիում 1887 թ. Ա. Ֆրենկելի ու Դ. Բաքրաձեի ջանքերով: Այստեղ առաջին հրատարակության պաշտոնական բնագիրը թողնված է գրեթե անփոփոխ (փոփոխվել է համակարգը), բայց կցված են ուշագրավ առաջաբան և անհրաժեշտ ծանոթագրություններ: Փոխվել է կանոնների հերթականությունը:

Վրացերեն և հայերեն տարբերակների միջև զուգահեռներ տանելը բարդ է՝ պայմանավորված վրացերենի իմացությամբ: Այս առումով մեզ բավական օգնեց Խ. Թորոսյանի ուսումնասիրությունը¹: Երկու դատաստանագրքերի բնագրերի համեմատությունն ըստ բովանդակության ցույց է տալիս, որ վրացերենը² թարգմանություն է «Դատաստանագրքի» Գ խմբագրությունից:

¹ Վերջինս գտնում է, որ վերը նշված հրատարակությունը վրացերեն խմբագրության ճշտագույն թարգմանությունը չէ, ուստի առավել ևս հեռու է հայերեն բնագրից, որովհետև վրացական խմբագրության ռուսերեն սույն թարգմանությունը հաճախ փոփոխում, կրճատում կամ աղավաղում է հենց այն բնագիրը, որից թարգմանվել է, այն է՝ հայերեն բնագիրը: Այս հրատարակությամբ կարելի է միայն ընդհանուր պատկերացում կազմել հայերեն բնագրերի բովանդակության վերաբերյալ (տե՛ս **Թորոսյան Խ.**, Մխիթար Գոշի Դատաստանագրքի վրացերեն խմբագրությունը, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1973 թ., թիվ 11, էջ 76-77):

² Մինչև 1963 թ. Վախթանգի օրենսգրքի միայն առանձին միավորներ են լույս տեսել վրացերեն: Վախթանգի օրենսգիրքն առաջին անգամ հրատարակել է Դ. Չուբինովը 1846 թ.: Ամբողջությամբ վրացերենով հրատարակվել է 1963 թ. վրաց ականավոր

Վ. Բաստամյանցն առաջինն է ցույց տվել, որ արքայազն Վախթանգի «Հավաք օրինաց»-ում եղած հայկական օրենքների երկրորդ մասը «Դատաստանագիրքն» է¹:

Այսպիսով՝ «Դատաստանագիրքն» ունեցել է նաև վրացերեն խմբագրություն, որը կապված է վրաց արքայազն, այնուհետև արքա Վախթանգ Զ-ի անվան հետ. վերջինս, էջմիածնից խնդրելով հայ թագավորների օրենքները և Գոշի «Դատաստանագիրքը», վրացերեն է թարգմանել տվել և ընդգրկել իր ժողովածուի մեջ²: Իս. Թորոսյանը վկայություններ է բերում և հաստատում, որ էջմիածնից Վախթանգին ուղարկվել է նաև գիտության մեջ ասորա-հռոմեական անունով հայտնի օրենսգրքի հայկական խմբագրությունը³:

«Դատաստանագրքի» մերօրյա կիրառությունները: Հայկական ուրուշ համայնքներում «Դատաստանագիրքը» գործել է երկար ժամանակ, ինչպես օրինակ՝ Սուդանի հայկական համայնքում: Այն հիմնվել է 19-րդ դարի կեսերին Ակն և Արաբկիր քաղաքներից գաղթած հայերի կողմից: Սուդանի հայկական համայնքի մասին մենք վկայություններ ենք գտնում Ռ. Մարտիրոսյանի հոդվածում, որտեղից տեղեկանում ենք, որ այս գաղութում դատական մարմինները հայ համայնքի անդամների ժառանգական իրավունքին վերաբերող հարցերը քննելիս ղեկավարվում էին Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»: Վարչական ժողովի առաջին նախա-

գիտնական, առաջնակարգ իրավագետ ակադ. Ի. Դոլիձեի աշխատասիրությամբ: Քննարկվող օրենսգրքի «Հայկական օրենքները» հրատարակվել են առանձին հայտնի հայագետ-վրացագետ Լ. Մելիքսեթ-Բեկի աշխատասիրությամբ:

¹ Նա կազմել է համեմատական աղյուսակ, որտեղ վրացերեն խմբագրության հոդվածների դիմաց նշված են Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համապատասխան հոդվածները՝ ըստ իր հրատարակության (տե՛ս Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, էջ 106): Նույն աղյուսակը կազմել են նաև Հ. Տեր-Հովհաննիսյանը, Հ. Կարստը, Լ. Մելիքսեթ-Բեկը և Ի. Դոլիձեն: Բոլոր այս աղյուսակները կազմվել են «Դատաստանագրքի» հրատարակված բնագրի՝ Բ խմբագրության հիման վրա: Իս. Թորոսյանը ևս կազմել է երկու դատաստանագրքերի հոդվածների համեմատական աղյուսակը՝ ըստ Գոշի «Դատաստանագրքի» վրացերեն խմբագրության հոդվածների համարների, «Դատաստանագրքի» Բ խմբագրության, ինչպես նաև ըստ Ա և Գ խմբագրության համապատասխան հոդվածների, որոնք հրատարակել է հենց ինքը (տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ ԴԴ-ԴԶ):

² Տե՛ս նույն տեղում, էջ Դ:

³ Տե՛ս նույն տեղում:

գահ Սարգիս Իզմիրյանի ջանքերով համայնքը ճանաչվել է պետության կողմից և ստացել մի արտոնություն ևս՝ ժառանգական իրավունքի գործերը կարգավորվել են Գոշի «Դատաստանագրքով»¹:

Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մերօրյա կիրարկման մասին տեղեկություն է հայտնում նաև Նշան Պ. Սաաթճյանը «Ձարթօնք» օրաթերթում հրատարակված իր հոդվածում: Վերջինս պատմում է, որ 1930-ական թթ. փաստաբան Վ. Խրլազյանն իրեն կանչել է Հալեպ և տվել Մխիթար Գոշի «Դատաստանագրքը»՝ հայտնելով, թե Հնդկաստանի Կալկաթա քաղաքում մի հարուստ հայ կտակի մեջ խնդրել է իր թողած ժառանգությունը բաժանել «Դատաստանագրքի» օրենքների համաձայն: Սաաթճյանը որոշ երաշխավորությամբ փաստաբանին է հանձնել օրենսգիրքը: Վեց ամիս անց փաստաբանը վերադարձրել է գիրքը՝ հայտնելով, որ Հնդկաստանի անգլիական իշխանությունները հարգել են կտակը թողած հայի կամքը, և դատավարությունը տեղի է ունեցել Գոշի «Դատաստանագրքի» օրենքների համաձայն²:

«Դատաստանագրքը» չի կորցրել իր գործնական-կիրառական նշանակությունը մինչև անգամ 1930-ական թթ.:

Այսպիսով՝ «Դատաստանագրքը» գործարկվել է հայկական գաղթաշխարհում՝ Լվովի, Կամենեց-Պոդոլսկի, Ղրիմի, Աստրախանի, Մոզդոկի, Ղզլարի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի, Տրանսիլվանիայի, Սուդանի և Հնդկաստանի հայ համայնքներում:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ» ԵՐԿԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Նարինե Միրզոյան

Քանալի բառեր - «Գիրք դարաստանի» կամ «Դարաստանագիրք», լարիներեն, լեհերեն, ղիչաղերեն, վրացերեն, ռուսերեն, հայ համայնք, «Լեհահայոց դարաստանագիրք», դարավարական ինքնավարություն, օրենքներ,

¹ **Մարտիրոսյան Ռ.**, Սուդանի հայ գաղութը, «Հայրենիքի ծայն», 1970 թ., սեպտեմբերի 9, թիվ 36, **Իզմիրլեան Ս.**, Դատումներ մեր հարիւրամեա յեղափոխութեան մասին (Անձնական յուշերու ընդմէջէն), Պէյրութ, 1962, էջ 11, նաև՝ նոյնի, Դատումներ մեր հարիւրամեա յեղափոխութեան մասին (Անձնական յուշերու ընդմէջէն), Երեւան, 1996, էջ 7:

² **Սաաթճեան Նշան Պ.**, Մխիթար Գօշ Գանձակեցի, «Ձարթօնք», օրաթերթ, 1963 թ., նոյեմբեր 9, թիվ 39:

Աստրախանի դատաստանագիրքը, օրենսգիրք, դատարան, Գրիգորիոպոլ, Կամենեց-Պոդոլսկ, Սուդանի հայ համայնք

Սույն հոդվածը ներկայացնում է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքի» գործարկումը հայկական համայնքներում: Երկն ունի այլալեզու խմբագրություններ և դրանց թարգմանությունները՝ լատիներեն, լեհերեն, ղփչաղերեն, վրացերեն և ռուսերեն: Այն կիրառվել է նաև հայկական մի շարք համայնքներում, որոնցից մեծ մասի վերաբերյալ տեղեկությունները սակավաթիվ են, իսկ մի մասի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել:

Հայկական որոշ համայնքներում «Դատաստանագիրքը» գործել է երկար ժամանակ, ինչպես օրինակ՝ Սուդանի հայկական համայնքում. այն չի կորցրել իր գործնական-կիրառական նշանակությունը մինչև անգամ 1930-ական թթ.:

Այսպիսով՝ «Դատաստանագիրքը» գործարկվել է հայկական գաղթաշխարհում՝ Լվովի, Կամենեց-Պոդոլսկի, Ղրիմի, Աստրախանի, Մոզդոկի, Ղզլարի, Նոր Նախիջևանի, Գրիգորիոպոլի, Տրանսիլվանիայի, Սուդանի և Հնդկաստանի հայ համայնքներում:

ПРИМЕНЕНИЕ «ГИРК ДАТАСТАНИ» («СУДЕБНИКА») МХИТАРА ГОША В АРМЯНСКИХ ОБЩИНАХ

Нарине Мирзоян

Ключевые слова - «Гирк датастани» или «Судебник», латинский, польский, кыпчакский, грузинский, русский, Армянская община, польская версия «Армянского Судебника», судебная автономия, законы, Судебник Астраханских армян, законодательство, суд, Григориополь, Каменец-Подольск, Армянская община Судана

В статье представлена приминение «Гирк датастани» в армянских общинах. Сочинение «Книга судебных правил» имеет иностранные редакции и переводы- латинский, польский, кыпчакский, грузинский, русский, и они дают представления о приминение «Судебника» в армянских общинах.

В некоторых общинах «Судебник» был применен в длительное время, например в Армянском Общине Судана. Он не потерял свое значение также в 1930 году.

Как заключение можно сказать, что «Судебник» был применен в армянских указанных общинах-Львов, Каменец-Подольск, Крым, Астрахан, Моздок, Кизляр, Новый Нахичевань, Григориопол, Трансильвания, Судан и Индия.

THE USE OF THE “LAW CODE” (“GIRK DATASTANI”) OF MKHITAR GOSH IN ARMENIAN COMMUNITIES

Narine Mirzoyan

Keywords: *“Girk Datastani”(The Book of Judgement) or “Law Code”, Latin, Polish, Kipchak, Georgian, Russian, Armenian Community, the Polish version of Armenian “Law Code”, judicial authority, laws, the “Law code” of Armenians in Astrakhan, Legislation, court, Grigoriopol, Kamianets-Podilskyi, Armenian Community of Sudan*

This article is dedicated to the use of the “Law Code” of Mkhitar Gosh in Armenian communities. It has foreign editions and translations; Latin, Polish, Kypchak, Georgian and Russian from which we study about the “Law Code” of Mkhitar Gosh in Armenian Communities.

In some communities the “Law Code” has been used for a long time, such as the Armenian community of the Sudan. It has not lost its importance in the 1930s.

Thus, the “Law Code” of Mkhitar Gosh has been used especially in these Armenian communities; Lviv, Kamianets-Podilskyi, Crimea, Astrakhan, Mоздок, Kizlyar, New Nakhijevan, Grigoriopol, Transylvania, Sudan and India.